# Բառարան

# Ցանկեր

## Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

(էջ 513)

Բառարանը բովանդակում է ներկա՝ չորրորդ հատորում հանդիպող բարբառային դժվար հասկանալի բառերը, ձևերն ու դարձվածքները, ինչպես նաև օտար ու փոխառյալ բառերի բացատրությունները:

Բառերն ու արտահայտությունները, ինչպես նաև ձևերը բացահայտելիս նկատի ենք ունեցել ներկա հատորի տեքստերում պարունակող իմաստներն ու առումները: Երբ նույն բառը կամ դարձվածքը, ձևը ունի մի քանի առումներ ու իմաստային տարբերություններ, ապա այդ դեպքում տվել ենք տարբեր իմաստները: Իսկ երբ պատահել են բառեր, որոնք գործածվում են փոխաբերական իմաստով, ապա այդպիսիք բացատրել ենք:

Բառարանում օգտագործել ենք բանահավաքների տեքստում տված բացատրությունները: Պատահում են սակավ բառեր և արտահայտություններ, որոնք նեղ, տեղական բնույթ ունեն և դժվար է տալ ստույգ բացատրությունը. բառարանում այդպիսի բառերի դիմաց նշում ենք՝ անստույգ և գրում հավանական ենթադրական բացատրություններ:

Այս բառարանը կազմելիս հիմնականում օգտագործել ենք «Էմինյան ազգագրական ժողովածուի» Ա հատորում եղած բառարանը, Ա. Թովմասյանի գրի առած հեքիաթների ձեռագիր ժողովածուի կցատակին եղած բառերի բացատրությունները, ինչպես նաև առանձին ձեռագրերում բացատրվող բառերը: Մասնակիորեն օգտագործել ենք նաև Հրաչյա Աճառյանի՝ «Հայերեն գավառական բառարանը» (Թիֆլիս, 1913), Ստեփանոս Մալխասյանցի՝ «Հայերեն բացատրական բառարանը» (Երևան, 1944), ինչպես նաև մի շարք այլ բառացանկեր:

## ՑԱՆԿԵՐ

### ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

(էջ 527)

Հատուկ անունների ցանկը ընդգրկում է ներկա հրատարակության IV հատորը, ըստ որում անուններն ու տեղանունները տրված են առանձին-առանձին, այբբենական կարգով:

Անունների ցանկում, ինչպես նախորդ երեք հատորներում ներկայացված են հեքիաթներում հիշված նշանավոր դեմքերը, սովորական անձնանունները՝ թագավորների, հեքիաթների հերոսների, հեքիաթային-առասպելական արարածների, կենդանիների, իրերի, գործիքների անունները, ինչպես նաև որպես հեքիաթների հերոս հանդես եկող սովորական կենդանիների, առարկաների, բույսերի, իրերի, գործիքների անվանումները և մարդկանց հատկանիշները բնութագրող մականուններն ու ածականները:

## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

Ինչպես ներկա հրատարակության նախորդ երեք հատորները, սույն IV հատորը ևս ունի առարկայական ցանկ, որը պարունակում է հեքիաթներում հանդիպող առարկաները, կենդանիները, բույսերը, բնության առասպելական և հասարակական երևույթները, տնտեսական, կենցաղային, կրոնական և այլ հասկացություններն ու ըմբռնումները:

Առարկայական ցանկում նույն բառի այլ արտահայտությունները և հնչյունափոխված ձևերը տրված են մի տեղ, իսկ նույն իմաստն արտահայտող տարբեր բառերի համար կատարվում է համապատասխան հղում: